ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ՄԻՔԱՅԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի հայցորդ

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ

Հիմնաբառեր. *առևտրային բանկ, ներդրումային գործունեություն, ներդրումների դասակարգում, առևտրային բանկերի ներդրումային գործունեության ցուցիչներ*

Հոդվածում քննարկվել են առևտրային բանկերի ներդրումային գործունեության տարբեր կողմերին ու ձևերին վերաբերող հարցեր, անդրադարձ է կատարվել ներդրումային գործընթացում առևտրային բանկերի մասնակցության հիմնական ուղղություններին և ներդրումային գործունեության ցուցիչներին: Երկրի տնտեսական զարգացման տեսանկյունից, կարևորվել է բանկային հաստատությունների կողմից տնտեսության իրական հատվածում ներդրումային գործունեության ակտիվացումը:

Տնտեսության ազատականացման, մասնավորեցման և գլոբալացման պայմաններում խիստ փոխվում է առևտրային բանկերի դերը: Վարկը դառնում է տնտեսության զարգացման որոշիչ գործոններից մեկը: Այն տնտեսավարողներին հնարավորություն է ընձեռում իրականացնելու նոր ներդրումներ և յուրացնելու նոր տեխնոլոգիաներ[1]: Այդ առումով, ներդրումային գործունեությունը դառնում է առևտրային բանկերի գործունեության կարևոր կողմերից մեկը:

Ներդրումային գործունեությունը էական դերակատարում ունի տնտեսության զարգացման գործում: Ներկայումս նշանակալի ներդրումային ներուժը կենտրոնացած է բանկային համակարգի հաստատություններում, որոնք, ի տարբերություն միջնորդային այլ կառույցների, օժտված են տրանսակցիոն դրամական միջոցների օգտագործման և վարկային էմիսիայի բացառիկ հնարավորություններով[2]: Կուտակելով ժամանակավորապես ազատվող ֆինանսական ռեսուրսները՝ առևտրային բանկերը դրանք ուղղում են վարկային համակարգի կապուղիներ, ամենից առաջ՝ առանցքային, ավելի արագ զարգացող տնտեսության հատվածներ և ճյուղեր՝ այդպիսով նպաստելով տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը:

Ներդրումային գործընթացում առևտրային բանկերի մասնակցության հիմնական ուղղությունները ընդհանուր կողմերով հետևյալն են.

- ներդրումային նպատակների համար միջոցների ներգրավում,

---

[1] Saini1 P., Sindhu J., Role of Commercial Bank in the Economic Development of INDIA// International Journal of Engineering and Management Research. Volume-4, Issue-1, February-2014.

[2] Ingram D., Investment Bank Vs. Commercial Bank. (http://smallbusiness.chron.com/investment-bank-vs-commercial-bank-3450.html)

- ներդրումային բնույթի վարկերի տրամադրում,
- ներդրումներ արժեթղթերում, բաժնեմասերում (ինչպես բանկի հաշվին, այնպես էլ հաճախորդի հանձնարարությամբ)[1]:

Նշված ուղղությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Ներգրավելով կապիտալներ, բնակչության խնայողությունները, այլ ազատ դրամական միջոցներ, առևտրային բանկերը ձևավորում են ռեսուրսներ՝ դրանց շահավետ օգտագործման համար: Միջոցների կուտակման ծավալները և կառուցվածքը այն հիմնական գործոններն են, որոնք ազդում են բանկերի վարկային և ներդրումային պորտֆելների, նրանց ներդրումային գործունեության վրա:

Որպես առևտրային բանկերի ներդրումային գործունեության ցուցիչներ կարող են կիրառվել հետևյալ ցուցանիշները[2].

- առևտրային բանկի ներդրումային ռեսուրսների ծավալը,
- բանկային ներդրումների ծավալը,
- կատարված ներդրումների բաժնեմասն առևտրային բանկի գումարային ակտիվներում,
- առևտրային բանկի ներդրումային գործունեության արդյունավետության ցուցանիշները, մասնավորապես՝ ակտիվների հավելաճը և շահույթի հավելաճն ըստ ներդրումների ծավալի,
- տնտեսության իրական հատվածում ներդրումների եկամտաբերության այլընտրանքային ցուցանիշները՝ եկամտաբեր ֆինանսական ակտիվներում կապիտալի ներդրման համեմատությամբ:

Առևտրային բանկերի ներդրումային գործունեության ձևերի դասակարգումն իրականացվում է ներդրումների տեսակների և ձևերի համակարգման ընդհանուր չափանիշների հիման վրա:

Նախ, միջոցների ներդրման օբյեկտին համապատասխան, կարելի է առանձնացնել իրական ակտիվներում ներդրումները (իրական ներդրումներ) և ներդրումները ֆինանսական ակտիվներում (ֆինանսական ներդրումներ): Բանկային ներդրումները կարող են նաև տարբերակվել ըստ ավելի մասնակի օբյեկտների. *ներդրումներ ներդրումային վարկերում, ցպահանջ դեպոզիտներ, բաժնեմասային մասնակցության մեջ, արժեթղթերում, անշարժ գույքի մեջ, թանկարժեք մետաղներում ու քարերում և այլն:* Իրական ներդրումները, սովորաբար, կազմում են բանկային ներդրումների ընդհանուր ծավալի աննշան բաժնեմասը: Առևտրային բանկերի համար ավելի բնորոշ են ֆինանսական ներդրումները: Ֆինանսական ներդրումները ներառում են ներդրումներն արժեթղթերում, ցպահանջ դեպոզիտներն այլ բանկերում, ներդրումային վարկերը, բաժնեմասային մասնակցությունը: Ֆոնդային շուկայի զարգացմանը զուգընթաց, ավելի մեծ նշանակություն են

---

[1] Каурова Н.Н., Тенденции и перспективы развития розничного бизнеса в коммерческих банков в России // Банковский ритейл. 2008, №11. с. 3-7.

[2] Barakat M., Banking Industry 2015: an analysis of activity performance, ridk profile and return Indicators. (http://www.bankdata.com)

ձեռք բերում ներդրումներն արժեթղթերում. պարտատոմսեր (պետական արժեթղթեր, դեպոզիտային սերտիֆիկատներ և այլն):

Երկրորդ, կախված բանկային ներդրումների նպատակից, ներդրումները կարող են լինել ուղղակի, որոնք ուղղված են ներդրման օբյեկտի անմիջական կառավարման ապահովմանը և պորտֆելային, որոնք իրականացվում են տոկոսների և դիվիդենտների տեսքով կամ ակտիվների շուկայական արժեքի մեծացման հետևանքով, եկամտի ստացման հաշվարկով:

Երրորդ, ըստ ներդրումների նշանակման, կարելի է առանձնացնել ձեռնարկության ստեղծման ու զարգացման, ինչպես նաև այն ներդրումները, որոնք կապված չեն տնտեսական գործունեության մեջ բանկի մասնակցության հետ: Ձեռնարկության ստեղծման և զարգացման ներդրումները ներառում են երկու տեսակ. ներդրումներ այլ ձեռնարկությունների տնտեսական գործունեության մեջ և ներդրումներ բանկի սեփական գործունեության մեջ: Կողմնակի կազմակերպությունների գործունեության մեջ առևտրային բանկի ներդրումներն իրականացվում են նրանց կապիտալ ծախսերում մասնակցության, կանոնադրական կապիտալի ձևավորման կամ ընդլայնման միջոցով: Բաժնետոմսերի, բաժնեմասերի ձեռքբերմամբ կանոնադրական կապիտալում մասնակցության դեպքում առևտրային բանկը դառնում է կանոնադրական կապիտալի համասեփականատեր և օժտվում օրենսդրությամբ նախատեսված բոլոր իրավունքներով: Բանկի սեփական գործունեության մեջ ներդրումները ներառվում են նրա նյութատեխնիկական հենքի զարգացման և կազմակերպական մակարդակի կատարելագործման մեջ:

Չորրորդ, ըստ ներդրումների համար միջոցների աղբյուրների, տարբերում են բանկի սեփական ներդրումները, որոնք իրականացվում են իր հաշվին և հաճախորդների, որոնք իրականացվում են հաճախորդների հաշվին և հանձնարարությամբ:

Հինգերորդ, ըստ ներդրումների ժամկետների՝ ներդրումները կարող են լինել կարճաժամկետ (մինչև մեկ տարի) և երկարաժամկետ (երեք տարուց ավելի):

Վեցերորդ, առևտրային բանկերի ներդրումները դասակարգվում են նաև ըստ ռիսկերի տեսակների, ըստ տարածաշրջանների, ըստ տնտեսության ճյուղերի և ըստ այլ հատկանիշների:

Ցանկացած երկրի տնտեսության զարգացում մեծապես կախված է բանկային հաստատությունների կողմից տնտեսության իրական հատվածի վարկավորման հնարավորություններից: Առևտրային բանկերը, որոնք դրամական միջոցները վերաբաշխում են տնտեսության հատվածներում, կատարում են հատուկ դեր տնտեսության վերելքի ժամանակ:

«Բանկերի և բանկային գործունեության մասին»[1] ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված 14 տեսակի ֆինանսական գործառնություններից մեկը ինվեստիցիոն (ներդրումային) և բաժանորդագրական գործունեություն իրականացնելն է: Թեպետ այդ գործառույթները կարևոր են տարբեր առումներով, այդուհանդերձ, երկրի զարգացման

[1] «Բանկերի և բանկային գործունեության մասին»[1] ՀՀ օրենք, հոդված 34, կետ է): Ընդունվել է 30.06.1996:

տեսանկյունից, գերակա կարող է դիտվել առևտրային բանկերի ներդրումային գործունեությունը:

Այսպիսով՝ նկատի ունենալով այն, որ Հայաստանի ֆինանսական հատվածը, ի դեմս առևտրային բանկերի, երկրի տնտեսության համեմատաբար կայացած հատվածն է, համակարգի հաստատությունների ներդրումային գործունեության ծավալումն իրական հատվածում, ներդրումների վերոնշյալ տեսակների և ձևերի համադրմամբ, կարող է նշանակալիորեն խթանել տնտեսական զարգացումը:

МИКАЕЛ КАРАПЕТЯН

ПОНЯТИЕ И ФОРМЫ ИНВЕСТИЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ

Ключевые слов: *коммерческий банк, инвестиционная деятельность, классификация инвестиций, индикаторы инвестиционной деятельности коммерческого банка*

В статье рассматриваются вопросы, касающиеся разных аспектов и форм инвестиционной деятельности коммерческих банков, а также представлены основные направления участия коммерческих банков в инвестиционном процессе и индикаторы инвестиционной деятельности коммерческого банка. С точки зрения экономического развития страны, автор указывает на важность повышения инвестиционной активности банковских учреждений в реальном секторе экономики.

MIKAEL KARAPETYAN

DEFINITION AND FORMS OF INVESTMENT ACTIVITY OF COMMERCIAL BANKS

Key words: *commercial bank, investment activity, classification of investments, indicators of investment activity of a commercial bank*

The article deals with issues concerning various aspects and forms of investment activity of commercial banks, as well as the main directions of participation of commercial banks in the investment process and indicators of the investment activity of a commercial bank are presented. From the viewpoint of economic development of the country, the author points out the importance of increasing the investment activity of banking institutions in the real sector of the economy.